Հայփոստ
Հայաստանի Փոստ

Ել. - ՀՓ/ 1276-25
«02» 05 2025թ.

ք. Երևան

#փոստըհիմնականում

«ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՌԻՏԱ ԾԱՂԿՅԱՆԻՆ
(Հասցե՝ ք. Բաղրամյան/Վաղարշապատ/ Աբովյան փ. 10/1)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ տիկին Ծաղկյան,

«Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025 թվականի ապրիլի 16-ին կնքած «ՀՓ-ԳՀԱՇՁԲ-25/34»-1 ծածկագրով պայմանագրի շրջանակում Կատարողը պարտավորվում էր կատարել ստանձնած պարտավորությունները մինչև 2025 թվականի մայիսի 7-ը: Կատարողը 2025 թվականի ապրիլի 29-ին գրությամբ տեղեկացրել է, որ հրաժարվում է կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները Պատվիրատուն միակողմանի լուծում է

«ՀայՓոստ» ՓԲԸ
ՀՀ, 0002, Երևան, Սարյան 22
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

պայմանագիրը (պայմանագրով ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ չկատարելու հիմքով)՝ համարելով այն լուծված:

Ընդհանուր պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառվում են «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, սույն ենթակետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

ա. սույն ենթակետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին,

բ. մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո,բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյաժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավորտեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կատ.՝ Տարոն Սանոսյան
Գնումների վարչության ղեկավար
Հեռ.՝ (055) 300022